

Բաժանմունքի հարգելի վարիչ՝

ԵՊԲՀ ուսանողների նախադիպլոմային և հետդիպլոմային կրթությունն ավելի արդյունավետ և թիրախային կազմակերպելու նպատակով համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնն անցկացնում է հետազոտություն ներգրավելով նաև գործատուներին: Խնդրում ենք Ձեզ լրացնել հարցաթերթը որպես գործատու, ինչը թույլ կտա բացահայտել կրթական ծրագրերում և գործընթացում առկա թերությունները և մշակել դրանց շտկմանն ուղղված միջոցառումների համալիր:

1.Նշեք Ձեր բաժանմունքի անունը

2.Նշեք թե Ձեր բաժանմունքի աշխատակիցներից

ա. քանի՞սն են ԵՊԲՀ օրդինատուրան ավարտել վերջին հինգ տարիների ընթացքում (այսուհետ նորավարտ բժիշկներ)

բ. բաժանմունքի բժիշկների ո՞ր տոկոսն են նրանք կազմում _____

3.Բաժանմունքում աշխատող նորավարտ բժիշկներից քանի՞սն են կլինիկական օրդինատուրան անցել տվյալ կլինիկայում

4.Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բաժանմունքի նորավարտ բժիշկների մասնագիտական պատրաստվածության մակարդակը

- գերազանց
- լավ
- բավարար
- անբավարար

5.Ստորև նշվածներից որո՞նք են Ձեր բաժանմունքում աշխատող նորավարտ բժիշկների ուժեղ կողմ(եր)ը

- տեսական գիտելիքները
- գործնական հմտությունները
- դժվարանում են ասել

6. Ձեր բաժանմունքի նորավարտ բժիշկները հիմնականում՝

	այո	ոչ
ինքնուրույն վարում են հիվանդներ		
կատարում են ինքնուրույն միջամտություններ		
հերթապահում են		
վարում են կլինիկական օրդինատորներ		
ընդգրկված են գիտական աշխատանքներում		
աշխատանքի ընդունվելիս լիովին պատրաստ էին աշխատանքին		
ստիպված էին անցնել լրացուցիչ վերապատրաստումներ		

7. Մոտավոր գնահատմամբ տվյալ մասնագիտությանն առաջադրվող հմտությունների ծավալի ո՞ր տոկոսին են տիրապետում նորավարտ բժիշկները

- մինչև 25%
- 25-50%
- 50-75%
- 75-100%

8. Արդարացվա՞ծ են արդյոք Ձեր սպասումները ԵՊԲՀ շրջանավարտներից

- Այո
- Մասամբ
- ոչ (ինչու) _____

9. Ըստ Ձեզ ԵՊԲՀ կրթական համակարգի ո՞ր փուլը փոփոխությունների կարիք ունի

- նախադիպլոմային ուսուցումը
- հետդիպլոմային ուսուցումը (կլինիկական օրդինատուրան)

10. Ըստ Ձեզ, որո՞նք են գործնականում, Ձեր բաժանմունքի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ, այն հիմնական հմտությունները և/կամ գիտելիքները, որոնց չեն տիրապետել նորավարտ բժիշկները ԵՊԲՀ կրթական ծրագրերում ընդգրկված չլինելու կամ ոչ բավարար մակարդակով դասավանդման պատճառով

11. Ինչպե՞ս եք տեսնում գործատուի (աշխատաշուկայի) մասնակցությունը բժշկական կադրերի պատրաստման գործընթացում (կարող եք նշել մի քանի պատասխան)

- մասնագիտական ասոցիացիաների կազմում տվյալ մասնագիտության կրթական վերջնարդյունքների մշակման մասնակցություն
 - մասնակցություն ուսանողների հետ աշխատաշուկայի ներկայացուցիչների պարբերական հանդիպումներին
 - անմիջական մասնակցություն ուսումնական պրոցեսին
 - մասնակցություն մասնագիտական որակավորումներին ներկայացվող պահանջների հստակեցման գործընթացին
 - այլ _____
-

Արմենիա հանրապետական բժշկական
կենտրոնի գլխավոր բժիշկ
Գրիգոր Գրիգորյանին

Հարգելի պրոֆ. Գրիգորյան

ԵՊԲՀ ուսանողների նախադիպլոմային և հետդիպլոմային կրթությունն ավելի արդյունավետ և թիրախային կազմակերպելու նպատակով համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնն անցկացնում է հետազոտություն՝ ներգրավելով նաև գործատուներին: Ուստի խնդրում ենք Ձեր թույլտվությունը և աջակցությունը Ձեր կլինիկայի բաժանմունքների պատասխանատուների շրջանում իրականացնել հարցում՝ վերը թվարկած խնդիրների բարելավման նպատակով:

Կից ներկայացվում է հարցաթերթի օրինակը:

ռեկտոր

Ա.Ա. Մուրադյան